# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

գ. Սարչապետ, Հեռ. 0 254 6 02 17, 0 254 6 02 18

**N 130 -11**
***22 օգոստոսի 2011թ.***

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

*Կից ներկայացնում եմ ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ղեկավարի 19.08.2011թ. թիվ 18-Ա, 22.08.2011թ. թիվ 19-Ա որոշումների և համայնքի ավագանու 19.08.2011թ. թիվ 18-Ն, 19.08.2011թ. թիվ 19-Ա որոշումների մեկական օրինակները:*

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Կատ. Աննա Բարոյան
0 254 6 02 17, 0 254 6 02 18

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 19-Ա

---

19/08/2011

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՖՈՆԴԻՑ ՆՈՒՅՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՈՒ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԵՎ ՊԵՏՐՈՎԿԱՅԻ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ ԱՆԺԵԼԻԿԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սարչապետ համայնքի բնակիչ, սոցիալապես անապահով պայմաններում ապրող Բուլիկ Մանուկյանին մոր՝ Սրբուհի Մանուկյանի թաղման ծախսերը կատարելու համար որպես օգնություն համայնքի բյուջեի սոց. ֆոնդից տրամադրել 25 000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:
2. Սարչապետ համայնքի բնակչուհի, սոցիալապես անապահով պայմաններում ապրող և առողջապես ծանր վիճակում գտնվող Հասմիկ Մարդոյանին բուժման ծախսերը կատարելու համար որպես օգնություն համայնքի բյուջեի սոց. ֆոնդից տրամադրել 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:
3. Համաձայն ՀՀ Լոռու մարզպետ պր-ն Ա. Նալբանդյանի 19.08.2011թ. թիվ 101/107.3/4288-11 գրության Պետրովկայի դպրոցի աշակերտուհի Անժելիկա Գրիգորյանին 2011թ. օգոստոսի 29-ից սեպտեմբերի 4-ը Ռուսաստանի Դաշնության Օրենբուրգ քաղաքում անցկացվելիք բռնցքամարտի հանրապետական մրցաշարում մասնակցություն ունենալու համար որպես աջակցություն համայնքի բյուջեի սոց. ֆոնդից տրամադրել 80 000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ:

Ընդամենը՝ 155 000 /հարյուր հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
2. ՂԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՄԱՐԴՈՅԱՆ ՆՈՐԻԿ
4. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## **ՈՐՈՇՈՒՄ N 18-Ն**

---

19/08/201

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-I
ԹԻՎ 44-Ն <ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1. Սարչապետ համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 44-Ն որոշմամբ հաստատված Սարչապետ համայնքի 2011 թվականի բյուջեում կատարել.

ա) փոփոխություններ՝

նախահաշիվ՝

| | | | |
|---|---|---|---|
| | *Կառավարման ապարատ* | | |
| 4214 տող | Կապի ծառայություն. | նախատեսված՝ 400.0 | փոփոխված՝ 470.0 |
| 4241 տող | Մասնագիտական ծառայություն | 120.0 | 185.0 |
| 4252 տող | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և ապահովում | 150.0 | 200.0 |
| 4264 տող | Տրանսպորտային նյութեր | 1300.0 | 1400.0 |
| 5122 տող | Վարչական սարքավորումներ | 1700.0 | 500.0 |
| | *Անասնաբուժական ծառայություն* | | |
| 4111 տող | Աշխատողների աշխատավարձ և հավելավճարներ | 480.0 | 292.2 |
| 4131 տող | Սոց. ապահովության վճարներ | 120.0 | 67.8 |
| | *Այլ մշակութային կազմակերպություններ* | | |
| 4269 տող | Հատուկ նպատակային այլ նյութեր | 400.0 | 650.0 |
| | *Բարձրագույն մասնագիտական կրթություն /ուսման վարձ/* | | |
| 4729 տող | Այլ նպաստներ բյուջեից | 1000.0 | 1700.0 |
| | *Պահուստային ֆոնդ* | | |
| 4891 տող | Պահուստային միջոցներ | 3107.3 | 843.7 |
| | *Ճանապարհային տրանսպորտ* | | |
| 4251 տող | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 2000.0 | 1700.0 |

բ) լրացումներ՝
նախահաշիվ՝

*Կառավարման ապարատ*

4112 տող Պարգևատրում, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ. 83.0

4269 տող Հատուկ նպատակային այլ նյութեր. 1000.0

*Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն*

4269 տող Հատուկ նպատակային այլ նյութեր. 500.0

*Սպորտ*

4269 տող Հատուկ նպատակային այլ նյութեր. 300.0

*Նախադպրոցական հիմնարկ*

4269 տող Հատուկ նպատակային այլ նյութեր. 500.0

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ
2. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ
3. ՄԱՐԳՈՅԱՆ ՆՈՐԻԿ
4. ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19-Ա

---

գ. Սարչապետ, Հեռ. 0 254 6 02 17, 0 254 6 02 18

*22 օգոստոս 2011թ.*

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԴՐԱՆԻԿ ԴԱՎԹՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱԿՏՈՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 1,2,3 կետերով, 56-րդ հոդվածի 3-րդ կետով և <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Անդրանիկ Դավթյանի սեփականաշնորհված մեկ խոտհարքը՝ 0,635 հա, 2-րդ կարգ, կադ. կոդ՝ 06-100-125-296, հետ վերցնել իր դիմումի համաձայն:
2. Նշված հողամասի նկատմամբ սեփականության նրա իրավունքը համարել դադարեցված սույն որոշման ընդունման պահից:
3. Հետ վերցված հողը համարել համայնքային սեփականություն, կատարել գրանցում՝ հողի սեփականության իրավունքի վկայականի տրամադրումը կատարել Սարչապետ համայնքի բյուջեի հաշվին:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18-Ա

---

գ. Սարչապետ, Հեռ. 0 254 6 02 17, 0 254 6 02 18

*19 օգոստոս 2011թ.*

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ, ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով և առաջնորդվելով Սարչապետ համայնքի ավագանու <2010 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 44-Ն <Սարչապետ համայնքի 2011 թվականի բյուջեն հաստատելու մասին> ավագանու որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին> 2011 թվականի օգոստոսի 19-ի թիվ 18-Ն որոշմամբ.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հաստատել Սարչապետ համայնքի 2011 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը /հավելված 1, 2/:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ